ներից. Հաղբատն ու Սանահինը, Գետիկ և Խորանաշատի վանքերը գլխավոր կեդրոններն են այս շրջանների. Հովհաննես Տավուշեցի, Մխիթար Գոշ, Գրիգոր Գանձակեցի, Վանական, ինչպես և սորա աշակերտները՝ Վարդան, Կիրակոս, Մաղաքիա և Մխիթար Այրիվանեցի պատմիչները, Գրիգոր Տուտեորդի, Դավիթ Բոբայրեցի, Գրիգոր Վորդի Սբասա, Դավիթ Ալավկա վորդի, Վարդան մեկնիչ, Հովհաննես Ա. և Բ., Համազասպ և Հովհաննես Գ. Հաղբատի յեպիսկոպոսները, սոքա բոլորը իբրև մատենագիրներ կամ շինարարներ, այս յերկու շրջանի մարդիկ են։

Կենդանարար շարժումը յերևում է հատկապես արվեստի մեջ. ճարտարապետությունն ուրույն կիր պարանք և ստանում այս դարում, մանավանդ գաւիթների պեսպիսությամբ և շքեղությամբ. նրա՝ քանդմամբ աւելի հին լինելով՝ դառնում են ԺԳ. դարում միայն, գրեթե, պարտադիր բոլոր նորաշեն տաճարների համար։ Հաղբատի հին տաճարին կցված գավիթը՝ նույն վանքի Հովհաննես Ա. յեպիսկոպոսի կողմից. յուր հոյակապ մեծությամբ, իրար խաչող վիթխարի կամարներով և կրկնակի գմբեթների բարձրությամբ, մի գլուխ գործոց է վոչ միայն յուր ժամանակի համար։ ԺԳ. դարու գավիթը թեև զարդարանքի մեջ Սելջուկյան արվեստի զուգահեռ յերևույթներ ունի, բայց յուր ամբողջությամբ հանդես է գալիս, վորպես մաքուր հայկական ստեղծագործություն, սերտ կապված ժողովրդական արվեստի հետ։ Հայ շինականի տունը հիմք է դարձել այս տեղ յեկեղեցական ճարտարապետության մի նոր ձևի, զանազանվելով միայն յուր շքեղությամբ, զարդարանքով և նյութի հետ կապված փոփոխություններով. գյուղացու ներսից փայտաշեն տունը փոխարկված է այստեղ քարաշենքի։ Քիչ չեն և փառավոր տաճարներ, վորոնք հայ նախնի ճարտարապետության վոգին ու ավանդությունները պահելու հետ, ունին և ԺԳ. դարու վերածնության հատուկ գծեր և զարդարանքի վոճեր։ Հոհաննա վանքը Վաչուտյանց իշխանության մեջ, Գանձասարը Խաչենի, Ամաղուն կամ Նորավանքը Որբելյանների, Դսեղի Բարձրաքաշը Մամիկոնյանների, Գեղարդը Խաղբակյանների, նույնը կարող ենք ասել բոլոր մեծ ու փոքր իշխանությունների համար, կենդանի և խոսուն վկաներ են մի աննման, եռանդուն շինարարության, վորի նմանը քիչ է կրկնվում պատմության մեջ*։

Քանդակագործությունը (նաև փայտի վերա), հատկապես խաչքարի արվեստը կատարելագույն նըբրության և հասնում. Գոշ Մխիթարի և Սանահնի վանքերի (պատկեր 5) Որբելյանների Նորավանքի, Դոփյանների Խոթա վանքի մեջ, Գեղարդում (պատկ. 6), ելն, պահված են բաղմաթիվ՝ մեկը մյուսից գեղեցիկ և ընտիր հուշարձաններ։ Իշխանական կամ սուրբերի բարձրաքանդակներ պատահում են ավելի հա-



Պատկեր 5.
Տաս.եղբոր խաչարձանը Սանահնում.

ճախ. մանրանկարչությունն ու վորմանկարչությունը կենդանության ուշագրավ նշաններ են ցույց տալիս։ Հայ իշխանական տներն իրենց ընտանեկան, նոր գրած ավետարաններն ունին, կամ Թաթարաց արշավանքների ժամանակ արևմտյան գաւառներում գերությունից ազատած, նորոգել տված*։ Խաչենի Վանքանկ

* Մտավոր և գեղարվեստական կյանքի այս բարգավաճումը, ընդարձակ շինարարությունը անկարելի եր առանց ժողովրդի ամբողջության նյութական բարեկեցության, վաճառականության ծաղկման, վորոնց մասին մեր տեղեկությունները, տարաբաղդաբար, շատ սուղ են և կցկտուր։

* Գանձ. 264. Ջրաբերդ գավառի Թալիշ գյուղի՝ յուր մանրանկարչական խորաններով նշանավոր Բեղունց ավետարանը, նորոգված 1060 թվին, բերված է Կեսարիայից Շիրանշահենց իշխանների ձեռքով ԺԳ. դարում. տես նաև Բարխուդարյան. Արցախ յեր. 226։ Գրիգոր Դոփյանը յուր հիշատակարանի մեջ նկարագրելով Թաթարաց բարբարոսությունները նաև քրիստոնյաների վերաբերությամբ, և իրենց անզորությունը նրանց բացարձակ ոգնելու, ավելացնում է, թե ինչպես սրբազան սպասներ, խաչեր և ՀՀ-եր են ազատել և բերել հայրենիք. «քանզի ընդ նոցին (Թաթարաց) ելբուքեան էաք. այլ սակաւուց ոմանց, զոր գնելով ի նոցանէ եւ զոր ձեռաւք մերովք թաքուցանելով, այլ եւ ըղսպաս (8!) սրբութեան, զնշանս տրունական և զտառս աստուածային, ոչ ձեռաւք մերովք առեալ յաւարի, այլ գնեալ ի նոցանէ, բերաք ի սեփական տէրութիւնս մեր զծաղկալից բուրաստան զաւագ տաւնականն եւ միւս այլ տաւնական ..... (մի տողի չափ չի կարդացվում։) Եւ զաւետարանն եւ զաջն սրբոյն Ստեփանոսի, զոր ի քաղաքէն Կանու (Իկոնիա) բերաք եւ տուաք ի բնիկ